

Ծառին Թրուտո հանդիսացաւ Գանատայի առաջին վարչապետը, որ պաշտօնապէս կ'այցելէ Հայաստան եւ Ցեղասպանութեան յուշահամալիր



Հայաստան կատարած պատմական այցելութեան ընթացքին, Գանատայի վարչապետ Ծառին Թրուտո եւ գրասաշրջութեան եւ ֆրանքոֆոնի նախարար Մելանի ժոյի հանդիպում ունեցան հայրենադարձ զանատահայերու հետ, որուն ընթացքին խօսք առաւ Գանատայի Հայ Դատի յանձնախորհի ներկայացուցիչ Րաֆֆի Տօնապետեան: Նշենք, Գանատայի վարչապետին պատուիրակութեան ընկերակցող Գանատայի հայ համայնքը ներկայացնող պատուիրակութեան մաս կը կազմէին Հայ Դատի յանձնախորհուրդի անդամներ Րաֆֆի Տօնապետեան, Ծահէն Միրաքեան եւ Յակոբ Թորոսեան: Վարչապետի Հայաստան այցելութեան լրատուութիւնը կարդալ էջ 3:



HONDA GABRIEL


7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



HONDA



Les saveurs
de l'automne!



MARCHÉ

ADONIS

The flavors of Autumn

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé - Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /   

Ճասթին Թրուտո հանդիսացաւ Գանատայի առաջին վարչապետը, որ պաշտօնապէս կ'այցելէ Հայաստան

Գանատայի վարչապետը Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ յարգանքի տուրք մատուցեց Յեղասպանութեան զոհերու յիշատակին

Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո Նոկտեմբեր 11–ին պետական պաշտօնական այցելութեամբ ժամանեց Հայաստան, մասնակցելու համար Երեւանի մէջ կայացող Քրանսախօս երկիրներու (Ֆրանգոֆոնիայի) միջազգային կազմակերպութեան 17–րդ վեհաժողովին։

Նոկտեմբեր 13–ին, Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո այցելեց Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ յարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին։

Գանատայի վարչապետին կ'ուղեկցէին Երեւանի քաղաքապետին առաջին տեղակալ Կամօ Արէեանը եւ ՀՀ Արտաքին գործերու նախարար Զոհրապ Մնացականեանը։

Հայոց ցեղասպանութեան թանգարանի տնօրէն Յարութիւն Մարութեանը Գանատայի վարչապետին ներկայացուց Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի ստեղծման պատմութիւնը։

Ճասթին Թրուտո նաեւ շրջայց կատարեց Հայոց ցեղասպանութեան թանգարանին մէջ եւ գրառում կատարեց թանգարանի յուշամատենին մէջ։

Այնուհետեւ Գանատայի վարչապետը Ծիծեռնակաբերդի ծառուղիին մէջ խորհրդանշական եղեւնի տնկեց։

Գանատայի Ծերակոյտը 2002 Յունիս 13–ին Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու որոշում անցուցած էր, իսկ Գանատայի խորհրդարանը 2004–ին ճանչցած է Հայոց Ցեղասպանութիւնը։

«Մենք կը յիշենք Հայոց ցեղասպանութեան զոհերը եւ հանդիսաւոր կերպով կ'երգուենք թոյլ չտալ, որ պատմութիւնը կրկնուի»

Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո Ծիծեռնակաբերդի մէջ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին յարգանքի տուրք մատուցելէ ետք շրջած է թանգարանին մէջ եւ գրառում կատարած՝ պատուաւոր հիւրերու յուշամատենին մէջ։

«Գանատացիները միշտ խիզախաբար կաղնած են ատելութեան եւ բռնութեան դէմ, որ սարսափելի գործողութիւններու պատճառ դարձած է։ Այսօր մենք կը յիշենք Հայոց ցեղասպանութեան զոհերն եւ հանդիսաւոր կերպով կ'երգուենք թոյլ չտալ, որ պատմութիւնը կրկնուի», Արմէնփրեսի փոխանցմամբ՝ նշուած է Թրիւտոյի գրառման մէջ։

Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո Հայաստանի մէջ հանդիպում ունեցած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանի հետ։

Գանատահայերը կը հարստացնեն Գանատայի համայնապատկերը. Ճասթին Թրուտո

Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո կ'ընդգծէ, որ գանատահայերը կը հարստացնեն Գանատայի համայնապատկերը, եւ պէտք է շարունակել երկու երկիրներուն միջեւ առկայ բարեկամական յարաբերութիւնները։ Այս մասին Նոկտեմբեր 13–ին ՀՀ վարչապետին եւ Գանատայի վարչապետին համատեղ մամուլի ասուլիսին ընթացքին ըսած է Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո։

«Հայաստանի հետ մեր բարեկամութիւնը դուք ա՛լ աւելի ամրացուցիք այս շաբթուան ընթացքին։ 80–ականներուն ես Հայաստան այցելած եմ հօրս ու եղբայրներուս հետ։ Այդ օրերէն ի վեր մենք կ'ամրացնենք մեր երկիրներուն կապերը։ Այս յարաբերութիւնները կարեւոր են նաեւ գանատահայ համայնքին համար։ Գանատայի մէջ 60 հազարնոց գանատահայ համայնք կայ, որ կը հարստացնէ մեր համայնապատկերը։ Գանատահայերը իրենց տաղանդը կը շարունակեն ներդնել աւելի լաւ Գանատա ստեղծելու համար։ Մեր երկու երկիրներու քաղաքացիները մեր ընդհանուր պատմութիւնը կը գրեն», ըսած է Թրուտո։

Գանատայի վարչապետին խօսքով՝ իրենք տարբեր հարցեր քննարկած են վարչապետ Փաշինեանի հետ հանդիպման ընթացքին։

«Ես եւ Նիկոլը քննարկեցինք նաեւ Հայաստանի ու Գանատայի միջեւ օդային ճանապարհորդութիւնը դիւրացնելու խնդիրը։ Հիմա 21 ժամ կը պահանջուի Երեւանէն Օթթաուա ճանապարհորդելու համար։ Այս հանդիպումը միայն սկիզբը կը դնէ մեր համագործակցութեան։ Մեր յոյսերն ու երազանքները կապուած են



ողջ աշխարհին հետ։ Մենք կը շարունակենք գալիք ամիսներուն ու տարիներուն ընթացքին այս խօսակցութիւնները», ըսած է Գանատայի վարչապետը։

Ճասթին Թրուտո շնորհակալութիւն յայտնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին՝ հիւրընկալութեան ու Ֆրանգոֆոնիայի միջոցառումները բարձր մակարդակով կազմակերպելուն համար։

Գանատա կը շարունակէ ջատագովել Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու ընդունումը. Ճասթին Թրուտո

Գանատա պիտի շարունակէ միջազգային հարթակներու վրայ ջատագովել Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու ընդունումը, այս մասին Նոկտեմբեր 13–ին ՀՀ վարչապետի ու Գանատայի վարչապետի համատեղ մամուլի ասուլիսին ընթացքին ըսած է Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո։

«Այստեղ, Երեւանի մէջ ես հնարաւորութիւն ունեցայ այցելելու ցեղասպանութեան յուշահամալիր։ Շատ զգացմունքային պահ էր այդ։ Աշխարհը պէտք է նման ոճրագործութիւններուն ըսէ՝ այլեւս երբեք։ Գանատա շատոնց ընդունած ու ճանչցած է ցեղասպանութիւնը։ Գանատա կարեւոր դեր կը խաղայ աշխարհով մէկ, մանաւանդ վերջերս յստակ քայլեր ձեռնարկելու ուղղութեամբ՝ նմանօրինակ ոճիրներու հաւանականութիւնը նուազեցնելու համար։ Մենք պիտի շարունակենք ջատագովել Հայոց ցեղասպանութեան ընդունումն ու ճանաչումը, որովհետեւ անցեալի ճանաչումը առաջին քայլն է խաղաղութիւն ու երկօտսութիւն ստեղծելու ճանապարհին», ըսած է Գանատայի վարչապետը։

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի խօսքով՝ Հայոց ցեղասպանութեան ընդունումը երկու կարեւոր խնդիր կը լուծէ։

«Շատ կարեւոր է արձանագրել, որ ցեղասպանութեան ընդունումը ունի երկու կարեւոր իմաստ։ Նախ եւ առաջ այն իր նպաստն է բերում դրանց դէմ կոռպալ պայքարին։ Քանի որ քսանմէկերորդ դարուն անոնք նոյնպեւ վերացուած չեն։ Հայաստանի համար այս մէկը նաեւ անվտանգութեան խնդիր է, որովհետեւ, ըստ հութեան, մենք այսօր ունենք սպառնալիքի շատ յստակ վտանգ, որովհետեւ Թուրքիայի հետ սահմանը փակ է, ու մենք չըջափակման մէջ ենք գտնոււմ։ Մեր քննարկումների ժամանակ խօսեցինք նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցի մասին։ Շատ կարեւոր է արձանագրել, թէ ի՛նչն է պատճառը, որ ծագել է Ղարաբաղի հարցը, որովհետեւ երբեմն տպաւորութիւն է ստեղծոււմ, որ սա տարածքային վէճի խնդիր է։ Դա այդպէս չէ, Արցախում ապրող հայերի առաջ կանգնել է նոր ցեղասպանութեան սպառնալիքը, ու մարդիկ ուղղակի ցանկացել ու ցանկանում են պաշտպանել ապրելու իրենց իրաւունքը։ Ղարաբաղի հակամարտութիւնը ծագել է այն պայմաններում, երբ մարդու ապրելու իրաւունքը կանգնել է յստակ սպառնալիքի առաջ, որովհետեւ աչքի առաջ ունեցել են 1915 թ.–ի ցեղասպանութիւնը», ըսած է Նիկոլ Փաշինեան։

Գանատայի վարչապետին կարծիքով՝ ԼՂ–ի

հակամարտութեան կարգաւորումը միայն խաղաղ բանակցութիւններու ճանապարհով կարելի է իրագործել

Գանատա կոչ կ'ուղղէ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը լուծելու խաղաղ ճանապարհով՝ բանակցային գործընթացի միջոցով, նոյն ասուլիսին յայտնած է Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո։

«Գանատա կոչ կ'ուղղէ շարունակելու խաղաղ բանակցութիւնները։ Յոյսով ենք, որ հարցը խաղաղ կը հանգուցալուծուի։ Կոչ կ'ընենք նաեւ շարունակելու միջազգային գործընթացը։ Յուսանք, որ խնդիրը կը լուծուի ի շահ տարածաշրջանի ժողովուրդներուն», ըսաւ Թրուտո։

Վարչապետ Նիկոլ Փաշինեան նշեց, որ Գանատայի վարչապետին հետ զրոյցին ընթացքին անոր յայտնած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ ունեցած պայմանաւորուածութիւններուն մասին։

«Ես Գանատայի վարչապետին տեղեակ պահեցի Ալիեւի հետ մեր ունեցած պայմանաւորուածութիւնների վերաբերալ։ Ղարաբաղի հարցին շուրջ, ի հարկէ, բանակցութիւնները տեղի են ունենում ԵԱՀԿ Մինսկի խմբի ջրջանակում, բայց կարեւոր է, որ մեր գործընկերներն էլ տեղեակ լինեն այդ գործընթացներին։ Մենք հակամարտութեան լուծումը տեսնում ենք միայն բանակցութիւնների ու խաղաղ կարգաւորման ճանապարհով», ըսած է Նիկոլ Փաշինեան։

Ճասթին Թրուտո յոյս ունի ապագային անդրադառնալու ՀՀ–ի մէջ Գանատայի դեսպանատուն բանալու հարցին

Հայաստանի մէջ Գանատայի դեսպանատուն բանալը անհրաժեշտութիւն կը դառնայ երկու երկիրներուն յարաբերութիւնները բարելաւելէ ետք, այս մասին յայտնած է Գանատայի վարչապետը նոյն ասուլիսին ընթացքին։

«Մենք կը հասկնանք, որ ՀՀ–ի մէջ Գանատայի դեսպանատուն բանալը լուրջ առաջընթաց կ'ըլլայ։ Որքան աւելի բարելաւուին երկու երկիրներուն յարաբերութիւնները, այնքան անհրաժեշտ կ'ըլլայ սկսիլ այդ գործընթացը։ Մենք յոյս ունինք ապագային անդրադառնալու այդ հարցին», ըսած է Թրուտո։

Գանատայի վարչապետին խօսքով՝ Նիկոլ Փաշինեանի հետ երկար խօսած են երկու երկիրներուն յարաբերութիւնները խորացնելու տեսլականին մասին։ Թրուտո նշեց, որ յարաբերութիւնները զարգացնելու մասին զրոյցները շատ ներշնչող էին։

Ճասթին Թրուտո Հայաստանի մէջ գանատական ընկերութիւնները հետաքրքրող ներդրումներու մեծ ներուժ կը տեսնէ

Հայաստանի մէջ ներդրումների մեծ ներուժ կայ, դուրս կը հետաքրքրեն գանատական ընկերութիւններն ու գանատահայերը, յայտնած է Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո։

«Հայաստանի ու Գանատայի միջեւ կան արդէն

SPECIAL OFFER! CLASSIFIED SECTION

DON'T MISS THIS OPPORTUNITY TO ADVERTISE!

NEW AT HORIZON WEEKLY!
A CLASSIFIED ADS SECTION

SPECIAL RATES! / A DISCOUNT OF 60%

Please call (514) 332-3757 to reserve your space now!

Ghadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS

OPEN 7 DAYS A WEEK!
WEDNESDAY 9am - 7pm
SATURDAY 8AM - 4PM
SUNDAY 8AM - 5PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food™
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON. M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Rx** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱԴԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Linda Kharaboyan Notaire Notary

Ձեր և ընտանիքի և իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցրէ մեզի

Vos affaires. À cœur.

Therrien Couture

3111, boul. St-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682-5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
www.therriencouture.com

VIZUALIS
optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire

514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal

(514) 744 4313

Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL Montreal QC
H4L 3L3

photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենյակ

KRIKOR ABRAKIAN **VAHAN MATOSSIAN**

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8

Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատությունը կարիքը ունի
20 հայ թաքսի վարորդի Միքայել շրջանին մեջ:
Հաճեցեք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence immobilière

Elie Berberian
Courtier immobilier / Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECouvreMENT SUR ONGLES NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM™
Mortgage Solutions Inc.
License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

SOSIE DERNERSESSIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830

716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4

416.662.6650 cell
centum.ca/sosie_dernersesian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Լոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

«Ապրիլ Միասին» Կարգախօսին Ներքեւ Ֆրանսախօս Երկիրներու 17-րդ Վեհաժողովը կայացաւ Երեւանի Մէջ

11 հոկտեմբեր 2018-ին, Երեւանի մէջ սկսաւ Ֆրանսախօս երկիրներու միջազգային կազմակերպութեան 17-րդ վեհաժողովը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան, անոր տիկինը՝ Աննա Յակոբեան, Ֆրանսախօս երկիրներու միջազգային կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Միքայէլ Ժանը եւ անոր ամուսինը մինչեւ վեհաժողովի պաշտօնական բացումը Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ դիմաւորած են Հայաստան հասած Ֆրանսախօս երկիրներու պատուիրակութիւններու ղեկավարները: Այնուհետեւ տեղի ունեցած է պատուիրակութիւններու ղեկավարներու լուսանկարահանման արարողութիւն:

Ըստ Հայաստանի կառավարութեան, Ֆրանսախօս երկիրներու 17-րդ վեհաժողովին մասնակցելու համար Հայաստան կը գտնուին 84 երկրի պատուիրակութիւն: Վեհաժողովին կը մասնակցի 38 երկրի ղեկավար:

Վեհաժողովի օրակարգին վրայ է Ֆրանսախօս երկիրներու միջազգային կազմակերպութեան ընդհանուր քարտուղարի ընտրութեան հարցը:

Վեհաժողովի թեման է՝ «Ապրիլ միասին՝ յարգելով համերաշխութիւնը, մարդասիրական արժէքներն ու բազմազանութիւնը՝ իբրեւ խաղաղութեան եւ բարօրութեան հիմք Ֆրանսախօս երկիրներու շրջանին մէջ»:

Ճասթին Թրուտօ. «Մարտահրաշքները Կը Յաղթահարուին Միայն Ու Միայն Միասին Ապրելու Միջոցով»

Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտօ վեհաժողովի իր ելոյթին ընթացքին յիշեց Ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ Շարլ Ազնաւուրը՝ ըսելով, որ ան մանրամասն կը տեսնէր Ֆրանսերէնի բոլոր նրբերանգները եւ մշակութային նրբութիւնները:

«Ես կը տեսնեմ, որ նոյն ոգին առկայ է այստեղ: Միասին մենք կրցած ենք ստեղծել շրջանակ մը, ուր մենք կ'առաջնորդուինք իրար հանդէպ յարգանքով, շրջանակի մը մէջ, ուր մեր պետութիւնները կրնան զարգանալ, լսել իրարու եւ այս ամէնը՝ ֆրանսերէնով», յայտարար-

եց Թրուտօ՝ շարունակելով. «Այս վեհաժողովը տեղի կ'ունենայ շատ կարեւոր պահու մը: Մենք պարտաւոր ենք վերաիմաստաւորել միասին ապրելու այս կարգախօսը, մարտահրաշքները կը յաղթահարուին միայն ու միայն միասին ապրելու միջոցով»:

Վարչապետ Փաշինեան. «Կարելոր է, Որ Մենք Համախմբուինք Համամարդկային Արժէքներուն Շուրջ»

Վարչապետ Նիկոլ Փաշինեան մասնակցած է Ֆրանսախօս երկիրներու պաշտօնական պատուիրակութիւններու ղեկավարներու նեղ կազմով հանդիպումին, որուն ընթացքին կազմակերպութեան նախագահութիւնը Մատակարարէն փոխանցուած է Հայաստանին:

Իր խօսքին մէջ վարչապետ Փաշինեան նշած է. «Մենք լիովին կը գիտակցինք այն պատասխանատուութեան, որ այսուհետեւ կը ստանձնէ Հայաստանի Հանրապետութիւնը՝ գալիք երկու տարիներուն ընթացքին այդ նախագահութիւնը ապահովելու համար: Կրկին շնորհակալութիւն կը յայտնեմ Ֆրանսախօս երկիրներու բոլոր անդամ երկիրներուն եւ կառավարութիւններուն՝ վստահութեան համար:

Էմմանուէլ Մաքրոն. «Պէտք է Ստեղծել Բոլորին Սթափութեան Հրաւիրելու Իրավիճակ»

Ֆրանսայի նախագահ Էմմանուէլ Մաքրոնը ելոյթ ունեցաւ Ֆրանսախօս երկիրներու միջազգային կազմակերպութեան 17-րդ վեհաժողովի բացման արարողութեան:

Ֆրանսայի նախագահը անդրադարձաւ Շարլ Ազնաւուրին՝ ընդգծելով, որ ան Հայաստանի, Ֆրանսախօս երկիրներու խորհրդանիշն է: «Ան երգի հսկայ տաղանդ էր, որ կ'երգէր մեր երջանկութեան, դժբախտութիւններուն, կեանքի նկատմամբ մեր թեթեւ մօտեցումներուն մասին: Ան կ'երգէր յատուկ թախիծով, որ իւրայատուկ է պանդխտութեան մէջ ապրող մարդոց: Մենք բոլորս գիտենք, որ ան հայ է, կ'երգէր եւ կը պահպանէր հայ-



կականութիւնը, կը խրախուսէր քաջութիւնը: Ամբողջովին ճանչնալով այն մեծ յանցագործութիւնը՝ Յեղասպանութիւնը, որուն զոհն էր նաեւ ինք, ես կ'ուզեմ հնչեցնել այդ մեծ մարդուն անունը՝ Շարլ Ազնաւուր», ընդգծեց Մաքրոն:

Նոր Ընդհանուր Քարտուղարը Կարեւորութիւն Պիտի Տայ Յատկապէս Ֆրանսերէնի Տարածման

Ֆրանսախօս երկիրներու միջազգային կազմակերպութեան նորընտիր ընդհանուր քարտուղար Լուիզ Միւշիքիուպոն մեծ պատիւ նկատած է նոր պաշտօնի

ստանձնումը: 12 հոկտեմբերին կազմակերպութեան վեհաժողովի փակման ժամանակ իր ելոյթին ընթացքին ան նշած է, որ հաճոյքով կը ստանձնէ նոր պարտաւորութիւնները:

«Ինծի համար մեծ պատիւ է այս պաշտօնին ընտրուիլը: Երեւան եկած էի ընդհանուր քարտուղարի թեկնածուի կարգավիճակով, Երեւանէն կը մեկնիմ արդէն քարտուղարի պաշտօնով: Համոզուած եմ, որ այս ընտանիքը մեծ ներուժ ունի: Իբրեւ ընդհանուր քարտուղար, կարեւորութիւն պիտի տամ Ֆրանսերէնի տարածման», ըսաւ Լուիզ Միւշիքիուպոն:



Այցելեցեք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝
www.sourphagop.org

[AB]

ALINE
BEKEREJIAN

NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ Ալին Պէքերեճեան

[AB]

Achat	Առնուոր	Purchase
Hypothèque	Սնշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսաւորում	Refinance
Mandat	Պատուէր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuration	Փոխանորդացիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Սրաբերէն, Դայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:



ELEGANT
WEDDING

BRIDAL SHOWCASE

Come eat, drink & plan your wedding

Gift Bag
for first
100
brides!

SUNDAY
NOVEMBER 4

Luxury Wedding Show at the Port of Montreal
200 de la Commune O. | 11am to 5pm
www.elegantweddingbridalshow.ca

Երագում Տեսած Հայաստան... Մտորումներ Անկախութեան Օրուայ Առիթով

Մարտի 1-ին, 1918 թվական, Մոսկվա, Ռուսական կայսրության և Երևանի միջև կնքված հաշտության պայմանագրի ստորագրումը

Ես համոզուած եմ, որ մի օր մենք տեսնելու ենք մեր երազած Հայաստանը եւ դա շատ ուշ չի լինելու։ Բայց ստացուեց այնպէս, որ ես այն աւելի վաղ տեսայ։ Տեսայ իմ երազած Հայաստանը՝ երազում։ Յուսով եմ՝ դէմ չէք լինի, եթէ պատմեմ, թէ ինչպիսի՛ն էր այն։

Թուականը կարեւոր չէ՝ գուցէ միւս տարի է, գուցէ տասնամեակ անց։ Երեւանի օդակայանում եմ, չգիտեմ՝ որտեղի՛ց եմ վերադառնում, չգիտեմ՝ ինչո՛ւ էի գնացել, չգիտեմ՝ որքա՛ն ժամանակ չեմ եղել հայրենիքում, բայց հասկանում եմ, որ յայտնուել եմ բոլորովին այլ իրականութիւնում։ Առաջին տպաւորութիւնս պայծառ միջնորոտն է, իսկ առաջին բանը, որ գրաւում է ուշադրութիւնս՝ ուրախ մարդիկ են։ Նրանց դէմքին ժպիտ կայ, պայծառութիւն, նրանք կանգնած են ձիգ ու հպարտ, քայլում են վստահ։

Ինչո՞ւ է այնպէս՝ հարցնում եմ ինձ, ո՞ւր են նախկին մուսլուկիւնը, գորչուկիւնն ու անվստահուկիւնը, ի՞նչ է փոխուելը

Հասկանալու համար իրավիճակը, տարբեր մարդկանց հետ գրոյցի եմ բռնւում։

Առաջինը, ում հանդիպում եմ, մի ծանօթ լրագրող է, ով առաջ քաղաքական թեմաներ էր արծարծում։ Սովոր էի տեսնել նրան խոժոռ դէմքով, տհաճ բաների մասին հարցեր տալիս։ Հիմա ուրախ է, աչքերը փայլում են, մօտենում է ու ողջւնում։

– Ի՞նչ կայ, չկայ,– հարցնում եմ։

Ասում է, որ նիւթ է պատրաստում միլիոներորդ սփիւռքահայի մասին, ով գալիս է հաստատուելու հայրենիքում։

– Իսկապէ՞ս,– զարմանում եմ,– բայց չէ՞ որ դու քաղաքական սկանդալներ էիր լուսաբանում։

Ձկան այլեւս սկանդալներ, ասում է, անցել են հին ժամանակները։ Քաղաքական ուժերը համերաշխ են ինչպէս երբեք։ Երկրի ներկայ ու նախկին ղեկավարները, ազդեցիկ կուսակցութիւնների պատասխանատուները պարբերաբար հաւաքւում են, կարեւոր հարցեր քննարկում, միասնաբար փնտռում ու գտնում լուծումներ։ Այլեւս չկան նախկին հակադիր ճամբարները՝ սեւի ու սպիտակի, թալանչիների ու ազնիւների, հնի ու նորի։ Մի խօսքով՝ ազգի ներսում թշնամիներ չկան։ Թէպէտ կան ճաշակների, մօտեցումների ու մտածողութեան տարբերութիւններ, սակայն առճակատումներ չկա՛ն, միմեանց դէմ անմաքուր պայքար չկա՛յ։ Հետեւաբար՝ եւ սկանդալներ չկան։

Դեռ զրոյցս լրագրողի հետ չաւարտուած, օդակայանի ժամանման սրահում տեսնում եմ մէկ այլ ծանօթի՝ մրգավաճառ Պետրոսին, ով ժամանակին սեղանիկ ունէր մեր տան հարեւանութեամբ։

– Ի՞նչ ես անում այստեղ,– հարցնում եմ։

– Ծովափից եմ վերադառնում,– ասում է,– ընտանիքիս հետ գնացել էի հանգստանալու։

Մնում եմ ապշա՞մ. մրգավաճառ Պետրոսը, ով մի կերպ էր օրուայ հացի փող վաստակում, ինչպէ՛ս կարող է ընտանիքի հետ գնալ արտասահման՝ հանգստանալու։

– Փա՛ռք Աստծոյ, հիմա լաւ են գործերս,– ասում է,– սեղանիկն այլեւս չկայ, փոխարէնը՝ ունեմ մի փոքր խանութ, որը կայուն եկամուտ է ապահովում։ Առաջ վարկերի պայմաններն այնպիսին էին, որ թւում էր թէ՛ վարկ են տրամադրում ոչ թէ՛ բիզնեսին նպաստելու, այլ՝ դործը չսկսած կործանուելու համար։ Այժմ տոկոսները տրամաբանական են, ցածր, եւ մենք էլ օգտուեցինք այդ առիթից։ Բացի այդ, հիմա մեծ «սուպերմարկետ»ները տեղափոխուել են քաղաքի ծայրամասեր, այլեւս Կիրակի օրերն ու շուրջօրեայ չեն աշխատում, եւ մեզ նման փոքր խանութների համար աշխատանքի դաշտ է բացուել։

Այնուհետեւ, Պետրոսը սկսում է խօսել երկրում իրականացուող նոր տնտեսական ծրագրերի, ուղղութիւնների մասին։ Ըստ նրա՝ փոխուել է տնտեսական քաղաքականութիւնը, օրինակ՝ հարկային քաղաքականութեան հիմքում այժմ դրուած է «շատից շատ, քչից քիչ» սկզբունքը, այսինքն՝ մեծ եկամուտ ունեցողը պէտք է վճարի յարաբերականորէն աւելի շատ հարկ, քան փոքր եկամուտ ունեցողը։

Պետրոսի պատմածից հասկանում եմ, որ մենք այլեւս ունենք իրական սոցիալական պետութիւն։ Պետութիւն, ուր չկան աղքատներ, ուր իւրաքանչիւրն ունի աշխատելու, արարելու, ստեղծագործելու եւ արժանապատիւ ապրելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները։ Պետութիւն, որի հիմքը սոցիալական արդարութի՛ւնն է, որն էլ իր հերթին երաշխաւորում է հասարակութեան համերաշխութիւնը։ Պետութիւն, ուր խոհեմութեանը, համապատասխան օրէնքներով, կարգ ու կանոնով ու իւրաքանչիւր քաղաքացու համար կեանքի բնական պայմաններ ստեղծելով՝ գրեթէ վերացուել են կոռուպցիան ծնող պատճառները։

Հրաժեշտ եմ տալիս նախկին մրգավաճառ հարեւանիս, դուրս գալիս օդակայանի շէնքից ու նստում առաջին պատահած տաքսին։ Այն նոր է, մաքուր, վարորդը կոկիկ տեսք ունի, անգամ՝ փողկապ է կրում։ Նա

ճանապարհ է ընկնում՝ չհարցնելով, թէ ո՛ւր եմ գնում։ Ասում եմ՝ ինչո՞ւ չես հարցնում, թէ ո՛ւր եմ գնում։ Պատասխանում է՝ գիտե՛մ, էջմիածին ես գնում։ Ծիշդ էր. էջմիածին էի ուղում գնալ։

Նոյնիսկ երազում, տաքսու վարորդները շատախօս են լինում եւ բաւականաչափ տեղեկացուած։ Բացառութիւն չէր եւ այս մէկը։ Ձսպասելով իմ հարցերին՝ պատմում է, որ հիմա ժողովուրդը շատ աւելի յաճախ է եկեղեցի գնում, մասնաւորապէս՝ էջմիածին, հայոց հոգեւոր կենտրոն։

Խնկացի բաներ է ասում տաքսու վարորդը․ ասում է, որ մեր ժողովուրդը ամուր կապերով կապուած է հայկական եկեղեցու հետ, ոչ միայն որովհետեւ հաւատացեալ է, այլ որովհետեւ հէնց եկեղեցի՛ն է հայկական։ Ախր, հայկական եկեղեցին ազգային կազմակերպուածութիւն է եղել, երբ պետութիւն չենք ունեցել․ այն մեր հոգեւոր անվտանգութեան խարխիւն է եղել, ազգային մշակոյթի պահապա՛նը, մեծ է եղել նրա դերակատարութիւնը, եւ այսօր էլ շարունակում է մեծ լինել նաեւ ազգային անվտանգութեան առումով։ Բարեբախտաբար, նուազագոյնի են հասել օտար ֆինանսաւորմամբ ու ղեկավարութեամբ ինքնակոչ եկեղեցիները։

Մի հարսանեկան աւտոշարասին է անցնում մեր կողքով, եւ տաքսու վարորդը ոգեւորութեամբ պատմում է, թէ առաւելագոյնի են հասել եկեղեցական ամուսնութիւնները, սոցիալական վիճակի բարելաւման շնորհիւ կարուկ նուազել են ամուսնալուծութիւնները, երիտասարդութիւնը աւելի համարձակ է դարձել նոր ընտանիքներ կազմելու հարցում։ Իւրաքանչիւր երիտասարդ, ով աւարտում է գինուորական ծառայութիւնը, պետական անմիջական հոգածութեամբ լուծում է իր աշխատանքի եւ բնակարան ունենալու խնդիրը եւ հաստատուն արմատ գցում սեփական հայրենիքում։ Ի միջի այլոց, միշտ խօսքը տարբեր սեռերի ներկայացուցիչներից կազմուած ընտանիքների մասին է՝ յատուկ շեշտում է տաքսու վարորդը, եւ աւելացնում՝ չնայած բոլորն էլ ազատ են եւ ոչ ոք իր հաւատամքի ու հակումների համար խտրականութեան ու հալածանքի չի ենթարկւում։

Մոմ եմ վառում եկեղեցում ու տաքսու վարորդին խնդրում՝ ինձ էջմիածնից Երեւան տանել մի քիչ երկար ճանապարհով։ Աշուահանակ ոսկեգոյն արտեր են՝ մշակուած ու արեւաշող, խաղողի ու ձիւրանի այգիներ՝ խնամուած ու բերրի։ Խնդրում եմ կանգ առնել մի տեղ ու զրոյցի եմ բռնւում մի գիւղացու հետ։ Ձկա՛յ այլեւս անմշակ մէկ քառակուսի անգամ՝ ասում է գիւղացին։ Այն պահից, երբ պետութիւնը հասկացաւ գիւղացու խնդիրները, սկսեց խանգարելու փոխարէն՝ օգնե՛լ նրան, անմիջապէս զարգացան հողագործութիւնը, պտղաբուծութիւնն ու անասնապահութիւնը։

Ես նայում եմ գիւղացու աչքերին ու հասկանում, որ նա իրեն տէ՛ր է գգում՝ իր հողի ու երկրի տէրը, որ նա պատրաստ է արարել յանուն իր երկրի, եւ իր բահով պահել իր երկիրը։

Երբ հասնում եմ արդէն Երեւան, որոշում եմ մի քիչ քայլել փողոցներում։ Լուսաւոր ու պայծառ է մայրաքաղաքը։ Բայց լոյսն արհեստական չէ ու պայծառութիւնն էլ՝ կեղծ։ Ամէն ինչ պարզ է, բայց՝ ճաշակով, չկայ աւելորդ ճոխութիւն, բայց կայ նկարագի՛ր։ Ու մարդիկ ժպտում են իրար։ Այդպէս ժպտալով ինձ է մօտենում մի հին ծանօթ՝ նախկին ազատամարտիկ, այժմ հայկական բանակի սպայ։

Յիշո՞ւմ ես՝ ասում է, մի ժամանակ կային գեներալներ ու օլիգարխներ, որոնք իրենց «ճիֆ»երի շարասիւնով չըջում էին այստեղ, ահ ու սարսափ տարածում շուրջ բոլորը։ Ու դրանից ելնելով՝ չըջանառութեան մէջ գրուեց մի բամբասանք, թէ իւրաքանչիւր բանակի սպայ պոտենցիալ գո՛ղ է, թալանչի ու յանցագործ։ Սկսեցին ստուգումներ անել, ենթադրեալ ու իրական մի քանի պարագաների մասին բարձրաճայնել, մի խօսքով՝ փորձում էին մինչեւ վերջ վարկաբեկել հայ սպային, հայ սպայով՝ հայկական բանակին ու մեր դիմադրողականութիւնը։ Բարեբախտաբար, վերջ դրուեց դրան։ Որովհետեւ ի սկզբանէ հասկանալի էր, որ մի քանի սրիկայի պատճառով չի կարելի պախապակել բոլորին։ Ու այլեւս չկան այդ սրիկաներն ու իրենց շարասիւնները, փոխարէնը՝ հայ սպան արժանի յարգանք է վայելում հասարկութեան մէջ, բոլորի հպարտութեան առարկա՛ն է։ Հասարակութեան մէջ վերացած է փողի պաշտամունքը, քաղքենիութիւնը, օտարամոլութիւնը։ Հիմա մարդիկ այլեւս երջանկութիւնն ու յաջողութիւնը չեն տեսնում շատ փող ունենալու մէջ։

Սպան ոգեւորւումս պատմում է, որ այլեւս անթերի է մեր բանակը, հզօր՝ ինչպէս մի՛շտ, բայց այլեւս անթերի՝ Ու չնայած՝ թուի ու քանակի խնդիր ենք ունեցել միշտ, բայց արդէն ձեւաւորուած է համաժողովրդական բանակը․ բոլոր այն քաղաքացիները, որոնք գէնք բռնելու ընդունակ են, իրենց ընթացիկ կեանքին ու աշխատանքին զուգահեռ, ժամանակ առ ժամանակ վերապատրաստւում են եւ կազմակերպուած են, որ եթէ

անհրաժեշտութիւն լինի՝ կարողանան պահեստային զօրամիււորումների դերակատարութիւն ստանձնել։

Ես նայում եմ սպայի բոցկալտացող աչքերին ու հասկանում, որ նա իրեն տէ՛ր է գգում իր երկրին ու պատրաստ է իր գէնքով պահել իր երկիրը։

Հրաժեշտ եմ տալիս սպային, քայլում առաջ ու հանդիպում մէկ այլ ծանօթի։ Հրաշալի մի բանաստեղծի, ով ժամանակին ստիպուած էր այստեղից–այնտեղից փող ճարել՝ իր գրքերն հրատարակելու համար։

Փոխուե՛լ են ժամանակները, սիրելի՛ բարեկամ՝ ասում է բանաստեղծը։ Հիմա գրողն ընթերցող ունի, երաժիշտը՝ ունկընդիր, դերասանը՝ հանդիսատես։ Հիմա գրողը գիրք է գրում եւ ստիպուած չէ օրուայ հացը հոգալու համար այլ աշխատանք փնտռել․ հիմա նկարչի աշխատավայրն իր արուեստանոցն է․ հիմա ժողովուրդն այլեւս անճաշակ երաժշտութիւն չի լսում, ցածրարժէք շոուեր ու սերիալներ չի դիտում։

Ես նայում եմ բանաստեղծի խորունկ աչքերին ու հասկանում, որ նա իրեն տէ՛ր է գգում իր երկրին ու պատրաստ է իր գրչով պահել իր երկիրը։

Ինձ ընդառաջ է գալիս արցախցի մի հին բարեկամ։ Ինչի՞ր մասին պիտի խօսենք նրա հետ, եթէ ոչ՝ Արցախի։

Արցախում այժմ բնակչութիւնը մի քանի անգամ աւելացել է՝ ասում է։ Նախկինում մեկնածները համախմբուած վերադառնում են, հիւսիսային Կովկասից հայերը տեղափոխուել են Արցախ, համահայկական ճիգ ու ջանքով բոլորի համար ստեղծուել են ապրելու ու արարելու նախանձելի պայմաններ։

Վաղուց արդէն կնքուել է Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան միջեւ ռազմական, ռազմավարական դաշինք։ Վերացած են երբեմնի տեղայնական, արհեստականօրէն արծարծուած ասեկոսները։ Արցախի հարցը հայ ժողովրդի, Հայաստանի Հանրապետութեան հարցն է, ու վե՛րջ։ Արցախի հարցում բան չունենք գիջելու, միտք չունենք գիջելու, աւելի ճիշդ՝ մենք ընդհանրապէս խօսակից չենք, չենք քննարկում որեւէ մէկի հետ Արցախի սահմանների հարցը, քանի դեռ դիմացինը չի ճանաչել Արցախի անկախութեան եւ հայկական պատկանելութեան փաստը։ Արցախը Հայաստանի Հանրապետութեան առանցքա՛լին օրակարգն է․ ուրիշների հետ յարաբերութիւններ, առանձին միջազգային թէ՛ տարածաշրջանային հարցերում կողմնորոշումներ, նորանոր բարեկամութիւններ հաստատուում են՝ հիմք ունենալով Արցախի, իմա Հայաստանի անվտանգութեան յոյժ կարեւոր հարցերը։ Արցախի յաղթանակը մեր սերնդի՛ յաղթանակն է․ այն ապահով հարթակ է նորանոր յաղթանակների համար։ Արցախը մեր կեանքի հարցն է, ո՛չ մի վարանում, ո՛չ մի տատանում, ո՛չ մի նահանջ այսօրուայ յաղթանակած Արցախի իրողութիւնից՝ ոչ մէկի թոյլատրուած չէ։

Ահա այսպէս խօսեց արցախցի բարեկամս։

Յետոյ հանգիպեցի դաշնակցական ընկերոջս՝

– Ո՞նց ես,– հացրի,– մերոնք ո՞նց են։

– Շա՛տ բան է փոխուել, ընկե՛ր,– պատասխանեց,– յիշո՞ւմ ես, այն ժամանակ հայկական եկեղեցու, հայկական բանակի, ընտանեկան արժէքների, ազգային արժեհամակարգի, միաժամանակ Դաշնակցութեան դէմ պայքար էր սանձագերծուել։ Հիմա այդ պայքարողները չկա՛ն, բայց մենք կա՛նք՝ աւելի հզօր, քան երբեւէ եղել ենք։

Ուրախութիւնից արթնացայ քնից, եւ յայտնուեցի մեր իրականութեան մէջ։ Ձեզ եմ թողնում եղրակացութիւնները, բայց ես հասկացայ, որ տեսել եմ իրակա՛ն սիրոյ եւ համերաշխութեան Հայաստանը։ Ես հաւատացի, որ այն լինելու է, որ չպէտք է ոչ մի իրականութիւնից յուսախաբ լինել. չպէտք է երբեւէ՛ յուսախաբ լինել։

Մենք ստեղծելո՛ւ ենք սիրոյ եւ համերաշխութեան մեր երկիրը։ Ով հաւատում է իմ երազին, թող մեզ իր գործակիցը համարի, եւ գործենք կողք–կողքի․ իսկ ով ոչ՝ Աստուած իր հետ, միեւնո՛յն է, իմ երազի երկիրը նաեւ ի՛րն է լինելու։

Մենք ստեղծելու ենք մեր սիրոյ եւ համերաշխութեան Նոր Հայաստանը, որտեղ՝

– Ամուր եւ անաստան է լինելու մեր բանակը,

– Ամուր ու անաստան է մնալու մեր եկեղեցին,

– Ամուր ու անաստան են մնալու մեր ընտանիքները,

– Իշխելու է արդարութիւնը, սոցիալական՝ արդարութիւնը,

– Արցախը միշտ մնալու է հայկական ու անվտանգ,

եւ վերջապէս՝ մեր մէջ թշնամիներ չե՛նք փնտռելու, չե՛նք ունենալու։

Հրաւոյ Մարգարեան

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ



ANI BAKERY

ԱՆԻ ՓՈՒԿՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատեր՝ Արսեն Տապալադեան

Ուր կը գտնեք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տիպուր առիթներով

Փորձեցեք եւ
գոհ պիտի մնաք



NEW ADDRESS FROM JANUARY 2016

Ani Bakery Ltd 25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00
(Երկուշաբթի փակ)

ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL

</

ՇԱԲԱԹ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ 2018
 ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՄԱՋԳԱՅԻՆԻ
 ԹԱՏԵՐԱՍՐԱՅԻՆ ՄԷՋ
 Երեկոյեան ժամը 6.00ին
 SATURDAY, NOVEMBER 24, 2018
 at 6:00 p.m.
 TORONTO AYC, 50 HALLCROWN PLACE

ԿԻՐԱԿԻ, 25 ՆՈՅԵՄԲԵՐ 2018
 Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔ ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ
 ՄԱՐԶԱՍՐԱՅ
 Երեկոյեան ժամը 6.00ին
 DIMANCHE LE 25 NOVEMBRE, 2018
 à 18 h
 Gymnase Haig Markarian Homenetmen-Gamk
 3401, rue Olivar Asselin, Montréal

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

| Homenetmen Canada

Հ.Մ.Ը.Մ.

**ԳԱՆԱՏԱՅԻ
 ՇՐՋԱՆԻ
 ԴԱՇՏՕՆԱԿԱՆ
 100-ԱՄԵԱԿԻ
 ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

Հովանավորութեամբ՝
**Հ.Մ.Ը.Մ.-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
 ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Նախագահութեամբ՝
**ԳԵՐԱՇԵՆՈՐՀ ՏԷՐ ԲԱԲԳԷՆ
 ԱՐՔ. ԶԱՐԵԱՆԻ
 ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՅԻ
 ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ**

Կազմակերպութեամբ՝
**Հ.Մ.Ը.Մ. ԳԱՆԱՏԱՅԻ
 ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Օրուայ պատգամաբեր՝

**ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ
 ՄԿՐՏԻՉԵԱՆ**

*Ատենապետ
 Հ.Մ.Ը.Մ.-ի
 Կեդրոնական
 Վարչութեան*

f @ Homenetmen Gamk Montreal

RESERVEZ VOS BILLETS :
homenetmengamk60@gmail.com
Leah Arakian mobile : 514-945-3300



ՇԱԲԱԹ 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ
Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՍԵ ՀԱՅԿ ՍԱՐԳՍԻԱՆ ՍԱՐԶԱՍՐԱՀ

երեկոյեան ժամը 8:00ին ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
երեկոյեան ժամը 10:00ին ԽՐԱՆՃԱՆՔ

SAMEDI LE 27 OCTOBRE
GYMNASÉ HAIG MARKARIAN HOMENETMEN-GAMK

20h CÉLÉBRATION OFFICIELLE
22h SOIRÉE DANSANTE +
STATIONS ALIMENTAIRES

PRIX D'ENTRÉE :
DEUX BILLETS



TÉLÉVISION

30 \$ | 20 \$ (+ 16 AKB)



ՀՕՄ-ի Թորոնթոյի
«Ռուբինա» Մասնաճիւղ
25-րդ Տոհմիկ Օր

Նուիրում՝
Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին

Չմոռում՝
Հայոց Թագաւարական Տոհմերուն
Արարողարան, Արտաշէսեան, Արշակունեաց,
Բաբելոնեանց եւ Կիլիկիոյ

ՀԱՅՈՑ ՓԱՌՔԸ

Մասնակցութեամբ՝
ԼԼԻ ԳԼԳԼԵԱՆԻ եւ իր նուագախումբին
Հրապարակ Մանրեալէն

Արրայական Տարազներու Ցուցադրութիւն

Ճոխ Յայտագիր
Երախճանք
Հայկական Ամառական Խոհանոց

Շաբաթ, 1 Դեկտեմբեր, 2018
Երեկոյեան ժամը 6:30ին
Հայ Կեդրանի սրահէն ներս, 45 Fullarton Place, Toronto
Մտնողի նուր՝ \$80 Միկնի 25 տարեկան՝ \$50

Տոմսերու եամար դիմել՝
Վիքթորիա Խաչկերեանին 905 472 5487
Քրիսթին Անտիսեանին 905 626 2597

Ձեռնարկի հասցիքն մաս մը պիտի նուիրուի Հայաստանի
Պետականութեան նպաստող ՀՕՄ-ի ծրագիրներէն մէկուն

Համագգային «Սանահին» - Մոնթրէալ
«Պետրոս Աղամեան» թատերախումբ

Մայգըլ Տրէյնի
Բարեկենդի Աշխարհակ
խիստ քրքշալի կատակերգութիւնը
Հայացում եւ բեմադրութիւն՝ Վիգեն Թիւֆէնքճեանի

Շաբաթ, 3 Նոյեմբեր 2018, ժամը 20:00-ին
Կիրակի, 4 Նոյեմբեր 2018, ժամը 19:00-ին

Théâtre Beauvoir | 4901, rue du Collège-Beauvoir, Pierrefonds (Québec)
Տոմսերու համար դիմել Սեւանին՝ 514.924.9248 կամ Չեփիւռնի՝ 514.206.3672
\$30 եւ թուագրեալ՝ \$50
Զանգեր - զորն՝ Անահիտ Ապրամեանի

ARMENIAN HERITAGE CRUISE* 2019
"The Original Armenian Heritage Cruise"
January 20-27, 2019
• MIAMI • ROATAN • COSTA MAYA • NASSAU • COZUMEL

www.ArmenianHeritageCruise.com

Royal Caribbean's *Azure of the Seas*

CABIN OPTIONS	RATES*
INSIDE CABIN	\$1,034
CENTRAL PARK VIEW	\$1,134
OCEAN VIEW	\$1,234
CENTRAL PARK BALCONY	\$1,499
BOARDWALK BALCONY	\$1,359
OCEAN VIEW BALCONY	\$1,524
JUNIOR SUITES	\$2,319
GRAND SUITES	\$3,519

You must book with TravelGroup to attend our private Armenian events.

HAROUT PAMBOUKJIAN

KHATCHIG JINGIRIAN

KYORK ARTINIAN

WANE BERBERIAN

Join us for...
Great Entertainment

For Reservations and Information Contact:
TravelGroup International
Local: 561-447-0750
Toll Free: 1-866-447-0750 Ext. 108 or 102
AHC@travelgroupintl.com
125 SE Major Blvd, Suite 14,
